Ք. Երևան,Արշակունյաց 3Ա, Հեռ: 094744604, էլ.հասցե. unionarmenia2021@gmail.com

«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
«UNITED ARMENIA» PARTY
ՄՀԱԿ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Քաղաքացու անմիջական մասնակցությունը Երեւանի կառավարմանը:

Երևանի կառավարման գործընթացի ժողովրդավարացում, Երևանի կառավարմանը քաղաքացիների մասնակցություն, համաքաղաքային կարևոր խնդիրների վերաբերյալ Երևանցու կարծիքն ու դիրքորոշումը հաշվի առնելու նպատակով պլեբեսցիտի՝ հանրային քվեարկության ինստիտուտի ներդրում՝ այդ թվում էլեկտրոնային հարթակում:

2. Բնակարանային ֆոնդ և կառուցապատում:

1. Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակում և կառուցապատման նոր սկզբունքների հաստատում:
2. Մինչև 40 տարեկան երիտասարդ երևանցիների համար, քաղաքապետարանի հետ ուղիղ պայմանագրով (շրջանցելով բանկերը և վարկերը), 10 տարի ժամկետում մաս-մաս մարելու ձևաչափով, 50-70 ք.մ. մակերեսով, 700$ 1 ք.մ. - ի համար արժեքով բնակարան ձեռք բերելու հնարավորություն:
3. Վթարային շենքերի ամբողջական վերակառուցում կամ ամրացում՝ քաղաքապետարանի և քաղաքացիների միջև ուղիղ պայմանագրերի հիման վրա:

3. Երևանցիների ֆինանսական պարտավորությունների կանոնակարգում և նվազեցում:

1. «Երևան» բանկի ստեղծում, որը կհեշտացնի մի շարք ֆինանսական գործառույթներ:
2. «Երևան» բանկի քարտատերերի համար, Երևանի քաղաքապետարանի կողմից մշակված ձեղչային համակարգից օգտվելու հնարավորություն՝ ՀՀ տարածքում և Հայաստանի սահմաններից դուրս:
3. Գույքահարկի արտոնությունների կիրառում՝ կախված բնակչի տարիքից և գույքի ծագումնաբանությունից:
4. Գույքահարկի տույժերի և տուգանքների, ճանապարհային երթևեկության որոշ կանոնների խախտման տուգանքների, բանկերի կողմից հաշվարկված տույժերի և տուգանքների համաներում:

4. Ավտոճանապարհների կառավարում:

1. Բոլոր գլխավոր փողոցներում հասարակական տրանսպորտի՝ ավտոբուսների, տաքսիների, հատուկ նշանակության ավտոմեքենաների համար առավոտյան և երեկոյան ծանրաբեռնված ժամերին առանձնացված ուղիների տրամադրում:
2. Հիմնական ճանապարներին կից ավտոմեքենաների վերգետնյա և ստորգետնյա կայանատեղիների ստեղծում:
3. Լուսաֆորների կառավարման խելացի համակարգի ներդրում՝ արհեստական ինտելեկտի կիրառմամբ:
4. Ծանրաբեռնված երթևեկությամբ փողոցներում ավտոմեքենաների կայանման արգելում:
5. Մի շարք փողոցներում հեծանվաուղիների ստեղծում:

5. Մշակութային կենտրոնների, կենցաղի տների, ժամանցի վայրերի համաչափ ապակենտրանացում: Կանաչ գոտիների զգալի ավելացում: Առկա հանգստյան գոտիների վերակառուցում և նորերի ստեղծում:

1. Համայնքային ենթակայության մշակութային կենտրոնների, կինոթատրոնների, կենցաղի տների ստեղծում:
2.Կանաչապատման ծավալնելի շեշտակի ավելացում (տարեկան 70-100 հազար ծառատունկի իրականացում)
3. Հրազդանի կիրճի ամբողջական վերակառուցում, մաքրման համակարգերի վերականգնում և արդիականացում, հանրային լողավազանների ստեղծում:
4. Բոլոր վարչական շրջաններում ժամանցային կենտրոնների և հանրային հանգստի նոր վայրերի ստեղծում:

6. Էկոլոգիական իրավիճակի բարելավման քայլեր:

1. Ժամանակակից աղբավայրերի ստեղծում՝ համալրված արդի աղբամշակման սարքավորումներով:
2. Օդի աղտոտվածության աստիճանի խիստ վերահսկողություն, արտանետման աղբյուրների զգալի նվազեցում:
3. Խմելու ջրի բծախնդիր վերահսկում՝ անկախ լաբորատորիաների միջոցով, ջրի որակի մշտական մոնիտորինգի իրականացում:
4. Շինաղբի ուղղորդված կուտակում՝ քաղաքի ռելյեֆների հարթեցման ծրագրի շրջանակում:
5. Քաղաքի ջրահեռացման համակարգի արդիականացում:

7. Կրթություն, գիտություն և սպորտ:

1. Բոլոր վարչական շրջաններում հանրակրթական դպրոցների, մանկական, մանկապատանեկան արվեստի ու սպորտի կենտրոնների, մսուր-մանկապարտեզների արդիականացում և նորերի ստեղծում:
2. Ավագ դպրոցների համար խիստ չափորոշիչների սահմանում և ստեղծում՝ ըստ քանակական անհրաժեշտության:
3. Միջին մասնագիտական կրթական համալիրի վերականգնում:
4. Բակային խաղահրապարակների և առողջ ապրելակերպի նպատակով տարածքների ստեղծում:

8. Սոցիալական խնդիրներ և առողջապահություն:

1.Անապահով խավի և արտակարգ իրավիճակներում հնարավոր տուժողների համար ժամանակավոր կացարանների ցանցի և անվճար սննդի հատկացման կետերի ստեղծում:
2. Պոլիկլինիկաների և ուսումնական հաստատությունների բուժկետերի վերազինում և անձնակազմի վերապատրաստում:

9. Երևան քաղաքի մեդիա հարթակի ստեղծում:

1. Հանրային մուլտիպլեքսում Քաղաքային սփռման հաճախականությամբ հեռուստաալիքի ստեղծում:
2. Երևանի քաղաքապետարանի կայքում և սոցիալական կայքերում Երևանի քաղաքապետարանի պաշտոնական էջերի թարմացում, այդ կայքերում Երևանի քաղաքացիների այցելությունների շեշտակի ավելացմանն ուղղված քաղաքականության ներդրում:
3. Համաքաղաքային կամ առանձին համայնքներին վերաբերվող խնդիրների հանրային քննարկման հարթակների ներդրում:

10.Սփյուռք և միջազգային կապեր:

1. Հայկական սփյուռքի ազդեցիկ գաղթօջախներ ունեցող քաղաքների հետ մեղձեցման հարթակի ստեղծում:
2. Երևանում բնակվող և ժամանակավորապես Երևան այցելած սփյուռքի ներկայացուցիչների համար հասարակական սատարման կենտրոնի ստեղծում:
3. Երևանի քաղաքապետարանին առընթեր, սփյուռքի ներկայացուցիչների մասնակցությամբ “Երևան՝ միացյալ հայության մայրաքաղաք” հասարակական խորհրդ ի ստեղծում:
4. Քաղաքի զարգացմանը միտված համահայկական ներդրումային ֆոնդ ի ստեղծում:

«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

ԵՐՎԱՆԴ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Կ.Տ